Հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ՊԻ տնօրեն

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Ա. Մելքոնյան

Կարծիք

Վահե Հակոբյանի «Իբրահիմ Ալ-Հալաբիի «Multaqā al-Ābḥur» («Ծովերի միաձուլում») աշխատության ազդեցությունը հանաֆիական կրոնաիրավական դպրոցի զարգացման պատմության վրա. ձեռագրերի համեմատական վերլուծություն» Է. 00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության մասին

Վահե Հակոբյանի ատենախոսությունը վերաբերում է հանաֆիական կրոնաիրավական դպրոցի զարգացման պատմության վրա «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābḥur» («Ծովերի միաձուլում») աշխատության ունեցած ազդեցությանը:

Հետազոտությունն իրականացվել է թեմային վերաբերող սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների և մասնագիտական (արաբերեն, հայերեն, անգլերեն և ռուսերեն) գրականության հենքի վրա: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 15-18-րդ դարերը: Վահե Հակոբյանի ատենախոսությունը նպատակ ունի բացահայտել Multaqā al-Abḥur («Ծովերի միաձուլում») երկի նշանակությունը և ազդեցությունը մուսուլմանական իրավունքի համակարգում: Կարծում եմ, որ ատենախոսության կառուցվածքը, լեզուն և ոճը համապատասխանում են գիտական պահանջներին: Նկատելի է, որ ատենախոսն ազատորեն օգտագործել է արաբերեն աղբյուրներն ու գիտական գրականությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից ու բառացանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 143 էջ:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տրված են ժամանակագրական շրջանակները, կիրառական նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Հանաֆիական մազհաբի առանձնահատկությունները սուննիական կրոնաիրավական դպրոցների համատեքստում», բաղկացած է երեք ենթագլխից: Այստեղ հիմնականում քննության է ենթարկվում սուննիական կրոնաիրավական դպրոցների մեթոդաբանությունը, «Ուսուլ ալ-ֆիկհի» էությունը, հանաֆիականության զարգացումը և մի շարք այլ հարցեր:

Երկրորդ գլուխը՝ «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābhur» աշխատության նշանակությունն ու ազդեցությունը հանաֆիական դպրոցի զարգացման հարցում» բաղկացած է երեք ենթագլխից: Այս գլխում ուսումնասիրության հիմնական շեշտը դրվել է հանաֆիական դպրոցի մեթոդաբանության ձևավորման, ինչպես նաև Իբրահիմ ալ-Հալաբիի «Ծովերի միաձուլում» աշխատության հետազոտման վրա:

Աշխատանքի երրորդ գլխում, որը կրում է «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābhur» («Ծովերի միաձուլում») աշխատության ձեռագրերի ուսումնասիրությունը (Մատենադարանի և Թագավոր Սաուդ համալսարանի ձեռագրերի օրինակով)» խորագիրը, իրականացվել է Մատենադարանի թիվ 1713 և «Սաուդ թագավորի» համալսարանի 6770 ձեռագրերի բովանդակությունների, մեկնաբանությունների և ծանոթագրությունների քննական և համեմատական վերլուծություն:

Ատենախոսության նեղ մասնագիտական բնույթը հաշվի առնելով, չենք կարող մեկնաբանել որոշ առանձնահատուկ բովանդակություններ և այնտեղ տեղ գտած թարգմանությունները: Սակայն մեթոդական և տեսական մի շարք դիտարկումներ կան, որոնց անդրադառնում ենք ստորև:

Կարծում ենք, որ Ալ-Հալաբիի երկին ավելի համապատասխան է կանոնագիրք կամ կանոնների ժողովածու անվանումը, քանզի «աշխատություն» բառը ներկայումս օգտագործվում է «գիտական ուսումնասիրություն» իմաստով և չի բնութագրում

միջնադարյան սկզբնաղբյուրները: Ընդ որում, օտարալեզու գրականության մեջ նույնպես այն հայտնի է կանոնագիրք կամ իրավական ժողովածու անունով (օրինակ՝ *Has Sukru Selim, Study of Ibrahim Al-Halabi, with special reference to the Multaqa, The University of Edinburgh, 1981, p. 1, Khan Aamir Shahzada, Multaqā al-Abḥur of Ibrāhīm al-Ḥalabī (d. 1549): A Ḥanafī legal text in its sixteenth-century Ottoman context. Budapest Central European University, 2014, MA thesis*):

Առաջին գլուխը (էջ 18-55), որը պատմում է հանաֆիական մազհաբի առանձնահատկությունների մասին սուննիական կրոնաիրավական դպրոցների համատեքստում, ավելի շատ նկարագրողական տեքստի տպավորություն է թողնում: Ուստի աշխատության տվյալ հատվածը մինչև հրատարակության ներկայացնելը՝ առաջարկում ենք հարստացնել վերլուծական և քննական մոտեցումներով: Շահեկան կլիներ, եթե ատենախոսն առաջ քաշեր նաև հիպոթեզներ և տար դրանց լուծումները:

3.2 ենթագլխում, որը վերնագրված է «ՄՄ ձեռ. 1713 և ՍԹՀ 6770 ձեռագրերի համեմատական վերլուծություն» (էջ 97-103), հեղինակը միշտ չէ, որ կիրառել է պատմական տեքստաբանության մեթոդներ: Երբ թվարկվում են ձեռագրերի տարբերությունները (խոսքը տարընթերցումների մասին է)՝ միշտ չէ, որ բացահայտվում են դրանց պատճառները: Երբեմն հեղինակը բավարարվում է ընդհանուր եզրակացությամբ (էջ 103) (տեքստաբանության մասին տե՛ս West M., Textual Criticism And Editorial Technique, Stuttgart, 1973, 157 p., Лихачев Д., Текстология (на материале русской литературы X-XVII вв.), СПб., Алетейя, 2001, 759 с., П. Маас «Критика текста», АРИСТЕЙ, том IV, 2011, с. 136-173, Trovato P., Everything You Always Wanted to Know about Lachmann's Method: A Non-Standard Handbook of Genealogical Textual Criticism in the Age of Post-Structuralism, Cladistics and Copy-Text, 2014, 468 p., Данилевский И., Историческая текстология, учеб. пособие, Нац. исслед. ун-т «Высшая школа экономики». — М., 2024, 556 с.): Արդյունքում, անհայտ է մնում, թե՞ որն է այս երկու տեքստերի համեմատության նպատակը՝ գտնե՞լ տիպային տեքստը, հավաքե՞լ խմբագրությունները, թե՞ կազմել բնագիր:

Հաջորդ՝ 3.3 ենթագլխի նախաբանում հեղինակը փորձել է բացահայտել մեկնաբանությունների և ծանոթագրությունների տարբերությունները և հաջող եզրահանգումներ կատարել (էջ 104)։ Տարընթերցումների թվարկման մեջ կարելի էր ավելացնել քննական վերլուծությունը։

Հեղինակը միշտ չէ, որ այս ձեռագրերը դիտարկել է դարաշրջանի ձեռագրագիտական ավանդույթի համատեքստում։ Սա կարևոր է, քանզի հնարավորություն կտար բացահայտել, թե ինչու են ձեռագրերից մեկում առկա ծանոթագրություններ, իսկ մյուսում՝ ոչ։

Հեղինակը ձեռագրերի հիշատակարանները ներկայացնում է դրանց նկարագրությունից հետո։ Մինչդեռ այդ հիշատակարանները պետք էր քննել սկզբից, ներկայացնել դրանց բովանդակությունը՝ գրչության վայրը, ժամանակը, տեքստաբանական առանձնահատկությունները։

Առկա են նաև որոշ սխալներ՝ «Սելեբի»՝ փոխարենը «Չելեբի» (էջ 81)։

Շահեկան կլիներ, եթե աշխատանքում հետազոտության ենթարկվեին Մատենադարանում պահվող «Multaqa al-Ābhur» («Ծովերի միաձուլում») աշխատության բոլոր ձեռագրերը։

Անհրաժեշտ էր առաջաբանում (էջ 4) առավել մանրամասն ներկայացնել երկի նկատմամբ եվրոպացի հետազոտողների ցուցաբերած գիտական հետաքրքրությունները։

Խիստ ցանկալի է, որ հետագայում սույն աշխատությունը հրապարակելիս ատենախոսը նկատի ունենա վերոնշյալ դիտողությունները։

Միաժամանակ, հաշվի առնելով ատենախոսության մի շարք արժանիքները, թեմայի ինքնատիպությունը և այլ դրական կողմեր՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժինը գտնում է, որ սույն ատենախոսությունն ամբողջապես համապատասխանում է ՀՀ

բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի թեկնածուական ատենախոսությունների համար ներկայացված պահանջներին: Հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի 2024 թ. դեկտեմբերի 2-ի նիստում:

Ատենախոսության քննարկմանը մասնակցում էին պատմական գիտությունների թեկնածուներ Զ. Գևորգյանը, Ա. Վարդանյանը, Շ. Ազատյանը, Մ. Գրիգորյանը, Հ. Խաչատրյանը, Լ. Նազարյանը, Ա. Մաղալյանը, Ա. Եսայանը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի վարիչի պարտականությունները կատարող, պ.գ.թ. Զ. Հ. Գևորգյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի վարիչի պարտականությունները կատարող, պ.գ.թ. Զ.Հ. Գևորգյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան